ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

«_26_» ___11___ 2024թ. № 08/ԼԱ/ -1955

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի և <<ԱԿԱ-3>> ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հուլիսի 4-ին կնքված ՀՄԿ-ԳՀԱՊՁԲ-24/17 ծածկագրով Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում պայմանագրով սահմանված ժամկետում (մինչև՝ 30 օգոստոսի 2024 թվական) ապրանք չի մատակարարվել:

<<Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի և <<ԱԿԱ-3>> ՍՊԸ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 2-ին կնքվել է պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագիր, ըստ որի ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի սեպտեմբերի 19-ը, սակայն նշված ժամկետում պայմանագրով նախատեսված ապրանքը դարձյալ չի մատակարարվել:

<<Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվել է:

<<ԱԿԱ-3>> ՍՊԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի <<ա>> պարբերությունը՝ <<ԱԿԱ-3>> ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

Լևոն Ազիզյան

Գրիգոր Մկրտչյան
010 57 62 80

0025, ք.Երևան, Չարենցի 46 Հեռ.՝ (+374 10) 55 55 02, Էլ.փոստ՝ hmc@env.am